ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Գիտություններ երկրի մասին XVIII, № 5, 1965 Науки о Земле

ԽՐՈՆԻԿԱ

Ա. Ե. ՔՈՉԱՐՅԱՆ

# ԵՐԿՐԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*1965 թ. փետրվարի 24-ից մինչև 26-ը Մոսկվայում տեղի ունեցավ երկրաբանների Համամիութենական խորհրդակցություն, որը կազմակերպել էր ՍՍՌՄ Պետական Երկրաբանական կոմիտեն։*

*Խորհրդակցությանը մասնակցում էին Սովետական Միության ամբողջ երկրաբանական ծառայության արտադրական, նախագծա-կոնստրուկտորական ու գիտահետազոտական կազմակերպությունների, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները։*

*Խորհրդակցությունում զեկուցումով հանդես եկավ ՍՍՌՄ Պետական երկրաբանական կոմիտեի նախագահ, ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Ա. Վ. Միդորենկոն։ Զեկուցումը նվիրված էր ՍՄԿՊ որոշումների համապատասխան ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացումը հանքա-հումքային ռեսուրսներով ապահովելու և երկրաբանա-հետախուզական աշխատանքների տեխնիկա-տնտեսական ցուցանիշները բարելավելու գծով երկրաբանների առաջ դրված խնդիրներին։*

*Ընկ. Ա. Վ. Միդորենկոյի զեկուցման մանրամասն քննարկումից հետո տեղի ունեցան ստեղծված երեք՝ նավթի ու գազի, մետաղային օգտակար հանածոների և ոչ-մետաղային օգտակար հանածոների ու ստորերկրյա ջրերի սեկցիաների նիստերը, որտեղ զեկուցումներով հանդես եկան ՍՍՌՄ Պետական Երկրաբանական կոմիտեի նախագահի տեղակալ ընկ. Վ. Ի. Իգրեվսկին, ՍՍՌՄ Պետական Երկրաբանական կոմիտեի անդամ ընկ. Վ. Ա. Պերվագոն և ՍՍՌՄ Պետական Երկրաբանական կոմիտեի նախագահի տեղակալ ընկ. Ի. Կ. Մինները։ Այդ բոլոր զեկուցումների քննարկումից հետո ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնք մտցվեցին երկրաբանների խորհրդակցության ընդհանուր որոշումների մեջ։*

*Զեկուցումներից բացի, խորհրդակցության մասնակիցների համար կազմակերպված էր հետաքրքիր ցուցահանդես՝ «Տեխնիկական միջոցների նոր մեթոդները երկրաբանական-հետախուզական աշխատանքների բնագավառում» թեմայով։*

*Խորհրդակցության ընթացքում բազմաթիվ այլ հարցերի շարքում լուրջ տեղ հատկացվեց գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքներին և նրանց հետագա անելիքներին։ Ընդգծվեց գիտահետազոտական կազմակերպությունների գործունեության կարևորագույն նշանակությունը երկրաբանական հետախուզական աշխատանքների էֆեկտիվության բարձրացման գործում և նշվեց, որ նրանք հիանալի հաջողություններ են ձեռք բերել երկրաբանական գիտությունների բնագավառում, որոնք մեծապես նպաստել են հանքա-հումքային բազայի ընդլայնմանը։*

Դրա հետ մեկտեղ խորհրդակցությունը լուրջ ուշադրություն դարձրեց այն թերություններին վրա, որոնք դեռևս գոյություն ունեն գիտահետազոտական աշխատանքներում։

Ամենալուրջ թերություններից պետք է համարել այն, որ որոշ գիտահետազոտական ինստիտուտներ և առանձին գիտնականներ դեռևս հեռու են կանգնած օգտակար հանածոների որոնման և հետախուզման ակտուալ գործնական պրոբլեմների լուծումից, կարևորագույն թեմաները մշակվում են երկար ժամանակ, երբեմն ցածր գիտատեխնիկական մակարդակով։ Դեռևս անհրաժեշտ հիմքերի վրա չեն դրված օգտակար հանածոների որոնման նոր, առաջադեմ մեթոդներ մշակելու, այդ մեթոդների էֆեկտիվությունը և նրանց հնարավորությունները գործնական կյանքում ստուգելու աշխատանքները։

Խորհրդակցության ընթացքում առանձնապես նշվեց, և ընդունված որոշումներում իր արժանի արտացոլումը գտավ այն հանգամանքը, որ մետաղային և այլ կարևոր օգտակար հանածոների կանխատեսումները երբեմն կրում են ընդհանուր բնույթ, չեն կոնկրետացվում այն աստիճան, որպեսզի հնարավոր լինի առանձնացնել հեռանկարային տեղամասեր և երկրաբանական ֆորմացիաներ, որոնք դառնային առաջնահերթ որոնումա-հետախուզական աշխատանքների օբյեկտներ։

Լուրջ քննարկման առարկա դարձավ գործող լեռնահանքային ձեռնարկությունների և կոմբինատների հումքային բազաների ընդլայնումը հիմնավորող աշխատանքների հարցը, աշխատանքներ, որոնք, ցավոք, մինչև հիմա արժանի ուշադրության չեն արժանացել և անհրաժեշտ ծավալով չեն կատարվել։

Ինչպես նշված է Սովետական Միության երկրաբանների խորհրդակցության որոշման մեջ, լրջորեն հետ են մնում հանքային ռեսուրսների և երկրաբանական հետախուզական աշխատանքների էկոնոմիկայի գծով կատարվող հետազոտությունները։

Դրանով է բացատրվում, որ երբեմն հետախուզման են ենթարկվում օգտակար հանածոների անհեռանկար հանքավայրեր, առանձին դեպքերում վերջիններիս բազայի վրա ստեղծվում են անշահավետ լեռնահանքային ձեռնարկություններ, փոշիացվում են մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսները և այլն։ Բացի դրանից, դեռևս կան հանքային հումքի մի շարք տեսակներ, որոնց օգտագործման բնագավառները ու շահավետությունը լիովին պարզված չեն, հաճախ արժանի ուշադրություն չի դարձվում հարակից էլեմենտների հիմնական հանքանյութերից կորզելու վրա, խնդիրներ, որոնցով պետք է զբաղվի ռեսուրսական երկրաբանությունը։ Գիտահետազոտական ինստիտուտների փորձարարական լաբորատոր բազան չի համապատասխանում սրավոր աճող պահանջներին, ժամանակակից գիտական ու տեխնիկական մակարդակին և պահանջում է հրատապ միջոցներ ձեռք առնել այն ընդլայնելու, ամրապնդելու և նորացնելու ուղղությամբ։

Խորհրդակցությունում նշվեց նաև, որ մի շարք օգտակար հանածոների գծով չեն կատարվել պաշարների աճի պլանները (մանգանի, փայտարի, բորի, պյեզոկվարցի հանքանյութեր, նավթ, գազ, և այլն), գլխավորեն հետ են մնում նավթի ու գազի խոշոր հանքավայրերի ձևավորման ու տեղաբաշխման օրինաչափությունները պարզելու և ածխի երկրաբանության պրոբլեմների լուծման ուղղությամբ կատարվող հետազոտությունները, հնարավորին չափ չեն հանվում ընդերքում գտնվող հանքանյութերը, նավթն ու գազը, պաշարների աճը

կատարվում է ոչ թե որակապես, այլ քանակապես և երբեմն ի հաշիվ փոքր հանքավայրերի և այլն։

Բացի վերը շարադրվածից, մեր մի քանի գիտնականներ (ակադեմիկոսներ Դ. Ս. Նալիվկին, Ա. Պ. Վինոգրադով, Վ. Ի. Սմիռնով և ուր.), հարցադրման կարգով առաջ քաշեցին մի շարք նոր պրոբլեմներ։ Օրինակ՝ նշելով, որ մեսոզոյան հանքավայրերի մոտ 75 տոկոսը տեղադրված է նստվածքային ապարներում, Դ. Ս. Նալիվկինը առաջարկեց ստեղծել և զարգացնել մեսոզոյանիայի մի նոր բաժին՝ նստվածքային մեսոզոլոգենիա, հիմք դնել խորային երկրաբանության, որը պետք է զբաղվի ընդերքի 10—15 կմ խորություն ունեցող գոնաներում կատարվող երկրաբանական պրոցեսների ուսումնասիրությամբ, պրոցեսներ, որոնք կանխորոշում են մագմատիզմի զարգացումը, նրա հետ կապված հանքառաջացումը և օգտակար հանածոների տեղաբաշխումը ժամանակի ու տարածության մեջ։

Վ. Ի. Սմիռնովը երկրաբանների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ժամանակակից էրոզիան դեռ չի մերկացրել մեսոզոյան հանքավայրերի զգալի մասը, որոնք սովորաբար գտնվում են 0,5—2 կմ խորությունների վրա, հետևաբար անհրաժեշտ է ստեղծել այդպիսի հանքավայրերի որոնման ու գնահատման նոր, առավել էֆեկտիվ մեթոդներ։

Ա. Պ. Վինոգրադովն իր ելույթում առանձնահատուկ տեղ տվեց գիտնականներին հիմնավորված կանխատեսումների պրոբլեմին, որի դերն ընդերքի հարստությունների հայտնաբերման ու յուրացման գործում դժվար է գերագնահատել։

Սույն համառոտ հոդվածի սահմաններում դժվար է շարադրել խորհրդակցությունում արտահայտած բոլոր կարծիքներն ու առաջարկությունները, կարելի է ասել միայն, որ դրանք հիմնականում նվիրված էին երկրաբանական ծառայության գործունեության հետագա էլ ավելի բարելավմանը։

Սովետական Միության երկրաբանների խորհրդակցության որոշումների լույսի տակ քննարկելով Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի գործունեությանը վերաբերող որոշ հարցեր, պետք է նշել, որ մեր գիտնականները հիմնականում զբաղված են տեղական գիտական պրոբլեմների լուծման գործով։ Զգալի հաջողություններ են ձեռք բերվել կանխատեսումնային երկրաբանական քարտեզների, որոնումների հիդրոգեոքիմիական և սկզբնական եղրապատկերների միջոցով «կույր» հանքամարմիններ հայտնաբերելու մեթոդներ մշակելու, հրաբխապիտության, բացարձակ երկրաբանական ժամանակագրության, ցրված ու հազվագյուտ էլեմենտների, հրաբխածին շերտախմբերի ուսումնասիրության և այլ բնագավառներում։

Սակայն այդ հաջողությունների կողքին ինստիտուտի գործունեության մեջ կան թույլ տեղեր ևս. դեռևս լրիվ կերպով չի վերացվել բազմաթեմայությունը, որը հնարավորություն չի տալիս մարդկային և նյութա-տեխնիկական միջոցները կենտրոնացնելու ավելի կարևոր պրոբլեմների կարճ ժամկետներում լուծելու համար։ Համառեղ կոմպլեքսային աշխատանքներ դեռևս քիչ են կատարվում, դրան որոշ չափով խանգարում է առանձին սեկտորների միջև գիտական համագործակցության թույլ լինելը, որը բխում է թեմատիկ պլանների բնույթից։ Այդ պլաններում համապատասխան տեղ չի հատկացվում կոմպլեքսային թեմաներին, որոնք կարող են կատարվել տարբեր սեկտորների մաս-

նագետներից կազմված արշավախմբերի ուժերով. էլ չենք խոսում այն մասին, որ նման թեմաներ կատարելու համար ինստիտուտը պետք է համագործակցի ինչպես ռեսպուբլիկական, այնպես էլ միութենական այլ երկրաբանական և գեոֆիզիկական կազմակերպությունների հետ, ինչպես այդ արվում է նավթագազաբերության պրոբլեմի գծով: Համատեղ կոմպլեքսային աշխատանքների նման վիճակի պատճառներից մեկն էլ, հավանաբար, այն է, որ կոլեկտիվ աշխատությունների համար գիտական աստիճաններ չեն շնորհվում և կրտսեր գիտաշխատողներն ամեն կերպ ձգտում են մենագրություններ կազմել և, ինչպես ասում են, «աստիճանավորվել»:

Ինստիտուտը գիտության նոր ուղղություններ զարգացնելու համար չունի ամենաանհրաժեշտ լաբորատոր փորձարարական բազաներ: Նոր միայն հիմնադրվել է բարձր ճնշումների և ջերմաստիճանների լաբորատորիա, սակայն անհրաժեշտ շենք ու սարքավորում չունենալու պատճառով այն լիարժեք աշխատանքներ կատարել չի կարող, թեպետ արդեն ստացել է առաջին հետաքրքրական արդյունքները մոլիբդենի միներալ սինթեզելու գծով: Ինստիտուտը չունի մոդելացման լաբորատորիա, որը հնարավորություն կտար մոդելացման միջոցով լուծելու հանքադաշտերի ստրուկտուրաների և հանքային պրոցեսների առաջացման հետ կապված մի շարք կարևոր հարցեր: Խիստ բացասաբար է անդրադառնում ինստիտուտի գործունեության վրա հարգավորման լաբորատորիայի (пробирная лаборатория) բացակայությունը. ազնիվ մետաղների անալիզները հարկադրված կատարում են այլ հիմնարկների լաբորատորիաներում, որը շատ միջոցներ ու ժամանակ է խլում:

Ներկայումս շատ կարևոր նշանակություն ունեն հանքային հումքի էկոնոմիկայի հարցերը, որոնք կազմում են տնտեսական երկրաբանության բաղկացուցիչ մասը: Արտասահմանյան երկրներ այցելած Սովետական Միության երկրաբանների զեկուցագրերից երևում է, թե այնտեղ, հատկապես ԱՄՆ-ում, ինչքան մեծ տեղ են հատկացնում տնտեսական երկրաբանությանը: Օրինակ, ԱՄՆ-ի երկրաբանական ծառայության սիստեմում, բացի փորձարարական երկրաբանության սեկցիայից, գոյություն ունի տնտեսական երկրաբանության հատուկ սեկցիա: Էլ չենք խոսում այն մասին, որ ԱՄՆ-ում շատ վաղուցվանից հրատարակվում է ««Economic geology»» ամսագիրը, որտեղ քննարկվում են այդ գիտությանը վերաբերող բազմաթիվ կարևոր հարցեր:

Մեր ռեսպուբլիկայում, բացի «Հայպետգեոլկոմի» սիստեմում վերջերս ստեղծված երկրաբանա-տնտեսական խմբից, հանքային հումքի էկոնոմիկայով ոչ ոք չի զբաղվում: Մեր կարծիքով, լավ կլիներ, որ այդպիսի մի խումբ ստեղծվեր նաև մեր ինստիտուտում և նրա գործունեությունը սիստեմատիկ կերպով լուսաբանվեր երկրաբանական ամսագրերում:

Ինչ վերաբերում է գործող լեռնա-հանքային ձեռնարկությունների հումքային բազաների ընդլայնմանը, ապա ինստիտուտն այդ ուղղությամբ որոշ դրական քայլեր կատարել է: Հայկական ՍՍՌ երեք կարևոր հանքային շրջաններում՝ Ալավերդի, Բասարգեչար, Զանգեզուր, ստեղծվել են ինստիտուտի գիտահետազոտական բազաներ, իսկ Զանգեզուրի բազան մոտ ապագայում հավանաբար կվերածվի գիտական ֆիլիալի: Այդ բազաների ստեղծումն ու գործունեությունը գիտությունն ու արտադրությունը միմյանց շաղկապող ամենակենսական օղակներ են հանդիսանում: Վերադաս գիտական ու վարչական որգան-

ների որոշմամբ ինստիտուտը ռեսպուբլիկայի մյուս երկրաբանական կազմակերպությունների հետ համատեղ հատկապես պետք է զբաղվի Ղափանի և Ալավերդու հանքաշրջանների պղնձի համար մանրամասն կանխատեսումնային և ստրուկտուրային-երկրաբանական քարտեզներ կազմելու աշխատանքներով, որոնք, ի վերջո, կհանգեցնեն պղնձի հանքանյութերի պաշարների ավելացմանը։

Նման քարտեզներ կազմել հնարավոր է միայն աշխատանքների ռացիոնալ կոմպլեքսավորման շնորհիվ։ Դա ինստիտուտից հրամայողաբար պահանջում է, որպեսզի Ղափանի և Ալավերդու հանքաշրջաններն ուսումնասիրող արշավախմբերը կոմպլեկտավորվեն անհրաժեշտ մասնագիտություններ ունեցող գիտնականներով (պալեոնթոլոգներ, ստրատիգրաֆներ, լիթոլոգներ, պետրոլոգներ, հրաբխագետներ, ստրուկտուրիստներ, հանքաբաններ և այլն)։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ գիտահետազոտական աշխատանքների բարձր մակարդակով և կոմպլեքսային ձևով կատարելուն որոշ չափով արգելակում է ինստիտուտի ներկայիս ստրուկտուրան, այսինքն առանձին սեկտորների գերիշխանությունը, նրանց թեմատիկ պլանների սուվերենությունը։ Մեր կարծիքով, անհրաժեշտ է մտածել ինստիտուտի նոր, ավելի կատարելագործված ստրուկտուրա ստեղծելու մասին։ Մի գուցե ավելի նպատակահարմար կլինի անփոփոխ թողնել սեկտորներն ու պրոբլեմային լաբորատորիաները միայն մասնագիտական մեթոդական ղեկավարություն ցույց տալու նպատակով, իսկ գիտահետազոտական աշխատանքների կատարման համար ստեղծել պրոբլեմային խոշոր կոմպլեքսային արշավախմբեր վերսեկտորային իրավունքներով, որոնք գիտական և վարչական տեսակետներից ենթարկվեն ինստիտուտի ղեկավարությանը։

Դրանով իսկ մի կողմից կվերացվեն առանձին սեկտորների սուվերեն իրավունքները կամ, եթե կարելի է այսպես արտահայտել, միջսեկտորային պատնեշները, մյուս կողմից հնարավորություն կնձեռնվի ավելի նպատակասլաց բաշխելու ինստիտուտի գիտական ուժերն ու նյութատեխնիկական միջոցները։

Վերին աստիճանի ցանկալի է, որ մեր գիտնականներն իրենց կարծիքը հայտնեն այս կարևոր ու հրատապ հարցի կապակցությամբ, որն արժանի է լուրջ և հատուկ քննարկման ինչպես ինստիտուտի գիտական խորհրդի նիստում, այնպես էլ Հայկական ՍՍՌ ԳԱ «Երկրի մասին գիտությունների» բաժանմունքում։

ՀՍՍՌ ԳԱ
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Ընդունված է 13. III. 1965 թ.